ների արեւմտեան լանջերից բղխում է իրարից երեք-երեք կիլոմետր հեռաւորութեամբ երեք առուակ, հիւսիսայինը՝ Զերմեսի, միջինը Ցուրէն-Շէհէր[1], հարաւայինը՝ Կարադաջուր, որոնք երեքը միանում են 4–5 կիլոմետր դէպի արեւմուտք հոսելուց յետոյ, աւերակ Ցուրէն Շէհէրի մօտ եւ ապա ուղղւում են արեւմուտքն: Կազան-Բաշի լեռներից մինչեւ Սեւ ծովը ձորոխը 380 կիլոմետր երկարութիւն ունի, 7000′ ոտնաչափ: Զերմենէն առաջ դնալով ոռոգում է Բաղչա-Վանք[2], Կարակայա, Օրթա-Վա-

---

[1] Ցուրէն-Շէհէր աւերակները անտարակոյս մեծ քաղաքի աւերակների մնացորդներ են, մինչեւ չպեղուի, չի կարելի այդ քաղաքի մասին որոշ դաղափար կազմել: Աւերակները շատ ընդարձակ են. մեծամեծ թումբեր կան 2—3 մետր հողով ծածկուած: Ցեղ-տեղ սրբատաշ քարեր, որ մեր են երեւում եւ այդ աւերակներից բազմաթիւ քանդակուած քարեր տարուած են այլ եւ այլ տեղեր: Ցուրէն-Շէհէրի եւ Փաշա-Փազի աւերակները ոչ առաջինն են եւ ոչ էլ վերջինը, Ցուրէն Շէհէրից 5 կիլոմետր հարաւ արեւմուտք Զերմենէ վանքի ափին կայ համանման մի ուրիշ աւերակ Ոստան, Օրթա-Վերան անունով: Այս բոլորն յիշեցնում են, որ այս հովտիկը ժամանակին նախարարական եւ արքայական բնակավայր է եղել: Ցուրէն-Շէհէրի անունը ցոյց է տալիս որ նա գոյութիւն ունեցել է Պարթեւ-Արշակունիների շրջանում: Զերմենէ առուակը, որին բնիկները նոյնպէս Զերմեսն են կոչում: Արդեօք Խորենացու յիշած Զրմէս Ոստանը չէ, որը Դրդ դարում վերաշինել եւ այն տեղից թագաւորում էր ամբողջ Հայաստանի վրայ Տիրան Արշակունին քսան տարի:

[2] Բաղչա-Վանքի մէջ կայ մի աւերակ տաճար, որի շուրջը բազմաթիւ աւերակներ, իսկ այդ աւերակներից մէկի հիմնական շարքերի տակ նկատելի է Աշքադարեան հայկական պարիսպ, որը մի ժամանակ ծառայել է որպէս ամրոց եւ ապա պալատական մի շինուածքի հիմք: Բաղչէ-Վանքը